# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՌԱԴԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հուլիսի 12-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ուկրաինայի Գերագույն Ռադայի նախագահ Վլադիմիր Լիտվինի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային Ժողովի փոխնախագահ Սամվել Բալասանյանի:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց երկու երկրների ու հավատակից ժողովուրդների ջերմ հարաբերություններին եւ միջխորհրդարանական կապերին ու համագործակցությանը: Վեհափառ Հայրապետն ու Ուկրաինայի Գերագույն Ռադայի նախագահը խոսեցին նաեւ հոգեւոր արժեքների կարեւորության, հասարակական կյանքում եկեղեցիների միաբանող դերակատարության մասին:

Իր խոսքում Նորին Սրբությունը նաեւ շնորհակալություն հայտնեց ի դեմս պրն. Լիտվինի Ուկրաինայի իշխանություններին հայ համայնքի եւ Ուկրաինայի Հայոց թեմի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար: Գոհունակությամբ արձանագրվեց նաեւ, որ Ուկրաինայում հայ համայնքին ընձեռված են բոլոր պայմանները ազգային-եկեղեցական կյանքի լիարժեք կազմակերպման համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՈՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Հուլիսի 17-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիոնի քաղաքապետ Ժերար Կոլոնին:

Քաղաքապետ Ժերար Կոլոնը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ իր համար մեծ ուրախություն է Հայաստան այցելելը: Քաղաքապետն ուրախությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների բարեկամությանը միջպետական, մշակութային եւ հոգեւոր ոլորտներում:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ հարաբերություններն ամենաբարձր մակարդակով են զարգանում, իսկ տարբեր քաղաքների միջեւ կապերը սերտանում են, ձեւավորվում են համագործակցության նոր հեռանկարներ: Նորին Սրբությունը նաեւ ուրախությամբ վերհիշեց Ֆրանսիա կատարած

հովվապետական այցի ընթացքում իր ունեցած հանդիպումը Լիոնի քաղաքապետի հետ:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի մասին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը երախտագիտություն հայտնեց Ֆրանսիայի ժողովրդին եւ իշխանություններին՝ ցեղասպանությունից հետո հայ ժողովրդի զավակներին ընդունելու եւ նրանց՝ կյանքի վերակազմակերպման ու երկրի կյանքին լիարժեք մասնակցության հնարավորություններ ընձեռելու համար: «Մեր ժողովուրդը երախտապարտ է Ֆրանսիայի իշխանություններին նաեւ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման համար», - նշեց Վեհափառ Հայրապետը՝ հավելելով, որ հայ ժողովուրդը շարունակելու է հետամուտ լինել ցեղասպանության ճանաչմանը, որպեսզի արդարությունը հաղթանակի, եւ երբեք նման ոճիր այլեւս տեղ չգտնի մարդկության կյանքում:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ երկու երկրների ու ժողովուրդների հարաբերություններն ամուր ու անխախտ մնան եւ ծառայեն մարդկության խաղաղությանն ու բարօրությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հուլիսի 29-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լեհաստանի նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկուն՝ ուղեկցությամբ ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի: Հանդիպմանը ներկա էին նաեւ Լեհաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Գալոյանը եւ Հայաստանում Լեհաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Զդիսլավ Ռաչինսկին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով Լեհաստանի նախագահի այցը ամենայն հայոց հոգեւոր կենտրոն, անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում: Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց, որ քրիստոնեական հավատը եւ արժեքներն են հիմքը կազմում հայ եւ լեհ ժողովուրդների դարավոր բարեկամության, որից դրդված դարերի ընթացքում հայորդիները տարբեր պատմական հանգամանքներում ապաստան են գտել հավատակից եղբայր լեհ ժողովրդի հյուրընկալ երկրում: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը, ի դեմս Լեհաստանի նախագահի, շնորհակալություն հայտնեց Լեհաստանի իշխանություններին եւ ժողովրդին այսօր եւս լեհահայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող բարյացակամ վերաբերմունքի եւ աջակցության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ գոհունակություն հայտնեց Հայաստանի եւ Լեհաստանի միջեւ փոխհարաբերությունների առավել սերտացման եւ տարբեր ոլորտներում համագործակցության զարգացման առիթով: